ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ»

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (այսուհետ՝ հանձնաժողով)

2024 թ. հունվարի 26-ին 12:00–ին կայացած նիստի

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան /հեռավար/	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Մասնակցում էին՝

Զարա Ասլանյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ (հանձնաժողովի անդամ)
Արմեն Սարգսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գրահրատարակչության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Նարինե Հովհաննիսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի գլխավոր մասնագետ ժ/պ (հանձնաժողովի անդամ)
Հասմիկ Աղաբաբյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչության սպորտի բարձրագույն նվաճումների բաժնի ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Վերոնիկա Խորասանյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Օրակարգային հարցեր

1. Նիստի օրակարգի քննարկում
2. Գնահատումների ամփոփում

1. Օրակարգի 1-ին հարց

Արթուր Մարտիրոսյանը հանձնաժողովի նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց օրակարգը:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո ձայների 5 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշեց.

1.1 Հաստատել նիստի օրակարգը:

2. Օրակարգի 2-րդ հարց

Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին փոխանցեց ԵՔ-ԴՄ-ԵՄ-01/24 ծածկագրով հայտարարված «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք»

դրամաշնորհի հատկացման մրցույթին դիմած կազմակերպությունների մրցութային հայտերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը՝ ս.թ. հունվարի 18-ի թիվ 02 նիստով պահանջված լրամշակումների հետ միասին:

Հանձնաժողովի անդամները քարտուղարին փոխանցեցին իրենց կողմից լրացված և ստորագրված գնահատման թերթիկները (կցվում են) մրցույթի հայտերի գնահատման արդյունքներն ամփոփելու համար:

Համաձայն հանձնաժողովի գնահատման արդյունքների ամփոփման՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Տեղեկություն հրավերով պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ	Տեղեկություն մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու վերաբերյալ	Մասնակցի ներկայացրած ֆինանսական նախահաշվի ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/	Տեղեկություն հայտի հետ-կանչման կամ փոփոխությունների մասին, ինչպես նաև հայտի վերա-բերյալ հարցում-ների մասին	Հայտերի գնահատման արդյունքները
1	«Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ	բացակայում էին՝ դրամաշնորհային ծրագրի առաջարկում Մասնակցի կողմից առաջարկվող միջոցառումները, դրամաշնորհային ծրագրի աշխատակազմում ներգրավվող «ծրագրի ղեկավար/համակարգող»-ի՝ ինքնակենսագրականը, դրամաշնորհային ծրագրի աշխատակազմում ներգրավվող բոլոր մասնակիցների համաձայնագրերը՝ ակնկալվող վարձատրության չափի մասին նշագրմամբ, դրամաշնորհային ծրագրի առաջարկի տիտղոսաթերթի վրա և Միջոցառումների աղյուսակում առկա է ծրագրի բյուջեի անհամապատասխանություն:	Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	10 215 000	Համաձայն հանձնաժողովի պահանջի՝ Մասնակիցը սահմանված ժամկետում թերի է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը:	0.64
2	«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ	բացակայում էին՝	Մասնակցի կողմից ներկայացրած	10 214 400	Համաձայն հանձնաժողովի	0.91

		դրամաշնորհային ծրագրի առաջարկում Մասնակցի կողմից առաջարկվող միջոցառումները, դրամաշնորհային ծրագրի աշխատակազմում ներգրավվող «գնումների համակարգողի» գրավոր համաձայնությունը՝ ակնկալվող վարձատրության չափի նշագրմամբ, դրամաշնորհային ծրագրի առաջարկի տիտղոսաթերթի վրա և Միջոցառումների աղյուսակում առկա է ծրագրի բյուջեի անհամապատասխանություն:	փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին		պահանջի՝ Մասնակիցը սահմանված ժամկետում պատշաճ ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը:	

Տեղեկատվության ամփոփումից հետո Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- «Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ-ն չի բավարարում նվազագույն որակավորման տվյալների չափանիշներին, մասնավորապես «Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված՝ դրամաշնորհային հրավերի ՄԱՍ Ի-ի 2.4 1)-ին ենթակետով պահանջվող («առնվազն 3 հանրային, մասշտաբային միջոցառումների կազմակերպման և անցկացման փորձառություն, երիտասարդական հանրային միջոցառումների կազմակերպումը հավաստող փաստաթղթերի ներկայացման դեպքում մասնակցին կտրվի նախապատվություն, բացի այդ՝ օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսական միջոցների ներգրավմամբ դրամաշնորհային ծրագիր ներկայացնելու դեպքում մասնակցին կտրվի նախապատվություն:») տեղեկատվությունը չի համապատասխանում դրամաշնորհային հրավերի ՄԱՍ Ի-ի 2.3 1)-ին ենթակետի պահանջին, լրամշակված փաթեթում բացակայում է Արփինե Թորոսյանի գրավոր համաձայնությունը՝ ակնկալվող վարձատրության չափի նշագրմամբ, բացի այդ՝ համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման» կարգի պետական դրամաշնորհ տրամադրվում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին,
- ԵՔ-ԴՄ-ԵՄ-01/24 ծածկագրով դրամաշնորհային մրցույթում առավելագույն միավոր է ստացել «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ն, որի ներկայացրած հայտի փաթեթը համապատասխանում է դրամաշնորհի հրավերով սահմանված որակավորման տվյալների չափանիշներին, դրամաշնորհային ծրագրի առաջարկը բովանդակային առումով առավելագույնս համապատասխանում է սահմանված նպատակներին և առաջնահերթություններին, ծրագրով նախանշված ակնկալվող արդյունքները համապատասխանում են ծրագրի նպատակներին և խնդիրներին, կազմակերպությունն ունի նմանատիպ ծրագրի իրականացման փորձառություն:

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո 5 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշեց.

2.1Հաստատել այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ ԵՔ-ԴՄ-ԵՄ-01/24 ծածկագրով հայտարարված «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» դրամաշնորհային մրցույթի արդյունքում կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր՝ համաձայն Հավելված 1-ի:

2.2 Հաստատել այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ ԵՔ-ԴՄ-ԵՄ-01/24 ծածկագրով հայտարարված «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» դրամաշնորհային մրցույթի արդյունքում չի կարող կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր՝ համաձայն Հավելված 2-ի:

2.3 Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սույն նիստի արձանագրությունը, ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի 28.1-ին կետով նախատեսված հայտարարությունները և սույն արձանագրության 2.1 կետում նշված կազմակերպությունների ներկայացրած հայտերի պատճենները ներկայացնել նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն՝ նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու նպատակով:

3. Հանձնաժողովի նախագահին՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում սույն արձանագրության 2.1 և 2.2 կետերով հանձնաժողովի ընդունած որոշումները նախարարի հաստատմանը ներկայացնելու նպատակով մշակել և ներկայացնել համապատասխան հրամանի նախագիծ:

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Արմեն Սարգսյան

Նարինե Հովհաննիսյան

Հասմիկ Աղաբաբյան

Վերոնիկա Խորասանյան

Հավելված 1.

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2024 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26 -ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏԻ 03 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՑԱՆԿ

կազմակերպությունների, որոնց հետ **ԵՔ-ԴՄ-ԵՄ-01/24** ծածկագրով հայտարարած **«Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք»** մրցույթի արդյունքում կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Միջոցառման /ծրագրի/ անվանումը	Կազմակերպության կողից ակնկալվող գումարը /դրամ/	Նախարարության կողմից տրամադրվող առավելագույն գումարը՝ ներառյալ ԱԱՀ /դրամ/
1.	«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ	«Գավառը՝ Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք»	10 214 400 *	10 216 000

**Կազմակերպության ներկայացրած ֆինանսական նախահաշիվը ներառում է ԱԱՀ-ն:*

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Արմեն Սարգսյան

Նարինե Հովհաննիսյան

Հասմիկ Աղաբաբյան

Վերոնիկա Խորասանյան

Հավելված 2.

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2024 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26 -ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏԻ
03 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՑԱՆԿ

կազմակերպությունների, որոնց հետ **ԵՔ-ԴՄ-ԵՄ-01/24** ծածկագրով հայտարարած **«Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք»** մրցույթի արդյունքում չի կարող կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Միջոցառման /ծրագրի/ անվանումը	Կազմակերպության կողմից ակնկալվող գումարը /դրամ/
1	«Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ	«Գավառը՝ Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք»	10 215 000

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Արմեն Սարգսյան

Նարինե Հովհաննիսյան

Հասմիկ Աղաբաբյան

Վերոնիկա Խորասանյան